ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 18 - Ա

«ՌԵՆԵՍԱՆՍ» ՀՈՒՄԱՆԻՏԱՐ-ՏՆՏԵՍԱԻՐԱՎԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒ-ԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բարեգործության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերը՝

1. Բարեգործական որակել Ֆրանսիայի Հանրապետության «Ռենեսանս Արմենիա» հասարակական կազմակերպության կողմից Հայաստանի Հանրապետության մարզերում բնակվող սոցիալապես անապահով ընտանիքներին և Լեռնային Ղարաբաղից տեղահանված անձանց անհատույց բաշխելու նպատակով «Ռենեսանս» հումանիտար-տնտեսաիրավական նախաձեռնությունների կենտրոն» հասարակական կազմակերպության հասցեով ուղարկված բեռի (9,020 կգ ընդհանուր քաշով, 61,134.20 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ 4,950 եվրո փոխադրման ծախսը, ցանկը՝ համաձայն հավելվածի, մաքսային ձևակերպումները կատարվելու են Երևանի մաքսային սպասարկման կենտրոն-մաքսատուն, վարչությունում) ներմուծման ծրագիրը:

2. «Ռենեսանս» հումանիտար-տնտեսաիրավական նախաձեռնությունների կենտրոն» հասարակական կազմակերպությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ու բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ

հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

12.01.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ